ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԱՊՁԲ-7/17-2

ք. Երևան 19 .03. 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի պժկ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Պահապան» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ.Մելիք-Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար/հավելված N 2/:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են՝ 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 305 533 200 (երեք հարյուր հինգ միլիոն հինգ հարյուր երեսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը կրաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը տեղի է ունեցել սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի դեպքերի են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարումը նախատեսվում է իրականացնել 2018-2020թթ., համաձայնագրերի կնքման միջոցով:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ

[illegible] հանձնարարականների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների [illegible] կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք [illegible] Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման [illegible] ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և 3.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Պահապան» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Ավան, Քուչակի 16/2շ
աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 11500198133700
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00882372
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1
N ԲՄԱՊՁԲ-7/17-2 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Ապրանքի անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողը և ծագման երկիրը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
1	Կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա	Կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա	<Պահապան> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	<u>Կիտել և կիսաշրջազգեստ կիսաբրդյա, ամենօրյա (լրակազմ)</u> ՏՍ 858-5300-2005 Կիտելը բաղկացած է կենտրոնական առնվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում նաև վուշ-բրդյա քաթանով: Առանձին ռետալները (գրպանների կափույրներ, օձիք) նույնպես կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով:Լանջափեշերը դարձածալերով, կոճկվում են երկու, ՀՀ ՀՈՒ զինանշանի պատկերով 22 մմ ոսկեգույն ալյումինե համածուլվածքից կոճակներով՝ ձախ կողմից: Կողքերից, կտրվածքով թերթիվավոր գրպաններ: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակված է կախիչ, թևերը ներկարված: Աստառը՝ ԳՕՍՏ-20272-2014 8-C5-ԲՇ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գործվածքից: Կիսաշրջազգեստը կազմված է առաջամասից, հետևամասից և ներկարված գոտուց: Հետևամասի ներքևում բացվածքով, հետևից վերնամասը՝ շղթայով կոճկվող, որը գոտու վրա կոճկվում է մեկ կոճակօղակով, ներսի կողմից ԳՕՍՏ-2272-96 8-C5-ԲՇ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն կտորից աստառով: Կոստյումը՝ 2311 արտիկուլի կամ համարժեք կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից, 317 գրամ մակերեսային խտությամբ, 67% բրդի և 33% պոլիէսթեր բաղադրությամբ: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 56/4 չափս-հասակի: Կիտելի ներքևից առաջին կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, մատակարար և կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը, ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերի չափսերը՝ լայնությունը 40սմ, բարձրությունը 20սմ և երկարությունը՝ 80սմ(շեղումները 2%): Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, քանակը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեխնիկական պայմանի համարը: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Շեղումները՝ ըստ տեխնիկական պայմանի: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: <u>Չափս-հասակային սանդղակ</u> Երեխայի հասակը / շրջագիծը: 44: 2: 1: 3: 4: 16: 4: 4 / 46: 2: 2: 12: 3: 6: 14: 3: 14 / 48: 8: 8: 14: 10: 16: 38: 19: 38 / 50: 3: 3: 10: 8: 4: 6: 19: 19 / 52: 4: 4: 8: 4: 4: 4: 16: 16 / 54: 3: 3: 3: 3: 3: 3: 6: 6 / 56: 2: 2: 1: 1: 1: 1: 3: 3 / Ընդամենը %: 18: 52: 30: 100
2	Բաճկոն և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա	Բաճկոն և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա	<Պահապան> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	<u>Բաճկոն և կիսաշրջազգեստ կիսաբրդյա ամենօրյա (լրակազմ):</u> ՏՍ 858-5324-2005 Կիսաբրդյա բաճկոնը կազմված է լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը միացվում են կետրոնական շղթայով: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց սեղմոններ: Կողային գրպանները շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով, կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Մեջքը կոկետկայով: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակված է կախիչ, թևքերը ներկարված, երկու կոճակով կոճկվող բազկակալներով: Կոճակները՝ 14 մմ պաշտպանական գույնի, ալյումինի համածուլվածքից, ՀՀ ՀՈՒ զինաշանի դաջվածքով: Ուսադիրների շրջանում երկու փակօղակներ և կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Կիսաշրջազգեստը կազմված է առաջամասից, հետևամասից և ներկարված գոտուց:Հետևամասի ներքևում բացվածքով, հետևից վերնամասը՝ շղթայով կոճկվող, որը գոտու վրա կոճկվում է մեկ կոճակօղակով, ներսի կողմից մետաքսե աստառացու:Կոստյումը՝ 2311 արտիկուլի կամ համարժեք կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից, 317 գրամ մակերեսային խտությամբ, 67% բրդի և 33% պոլիէսթեր բաղադրությամբ: Աստառացուն 3331 ՌԿ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գույնի գործվածքից: Արտադրվում են 44/1 մինչև 56/4 չափս-հասակի:Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Բաճկոնի շղթայի բռնակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը, ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերի չափսերը՝ լայնությունը 40սմ, բարձրությունը 20սմ և երկարությունը՝ 80սմ(շեղումները 2%): Արկղերը՝ պիտակավորված,

				պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, քանակը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեխնոլոգիական ռեժիմներ հումքը: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Շերտանները՝ ըստ տեխնոլոգիական ռեժիմների: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Չափս-հասակային սանդղակ Կրծքավանդակի շրջագիծը / Հասակը: 44, 46, 48, 50, 52, 54, 56, Ընդամենը % 2: 1, 2, 8, 3, 4, 18 3: 3, 12, 14, 10, 8, 3, 2, 52 4: 16, 6, 4, 3, 1, 30 Ընդամենը %: 4, 14, 38, 19, 16, 6, 3, 100
3	Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կիսաբրդյա	Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կիսաբրդյա	<Պահապան> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	**Բաճկոն՝ գարնանային-աշնանային կիսաբրդյա (հատ)** Բաճկոնն ունի երկկարանի ներկարված թևքեր, ծալովի օձիք և դարձածալ, օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Հետևամասին և առաջամասին մշակված են վրակարված կոկետկաներ: Առաջամասում մշակված են շերտիկով կողքի գրպաններ: Հետնամասն ունի միջնակար: Բաճկոնի օձիքը կտրված կանգունակով է: Բաճկոնի առաջամասերի և հետևամասերի աստառները փախլավանձև մգդակարված են տաքացնող ներդիրով (սինտեպոն): Թևքերի աստառներին ներդրվում է սինտեպոն: Ձախ առաջամասի աստառին մշակված է շերտիկով ծոցագրպան, որը կոճկվում է օդային օղակով և կոճակով: Բաճկոնը կապվում է 4-4,5սմ լայնության գոտիով, որը անցկացվում է կողքերի կարերում մշակված կամրջակների միջով: Գոտին կոճկվում է պլաստմասե ճարմանդով և գոտու վրա մշակված կամրջակով: Բաճկոնը կոճկվում 4 կոճակօղակներով՝ գաղտնի կոճկվածքով: Լանջափեշի, օձիքի, գոտու, գրպանի, կոկետկաների եզրերը մշակված են 0,1-0,7 սմ լայնությամբ զուգահեռ զարդակարերով: Գաղտնի կոճկվածքը մշակվում է 6 սմ լայնությամբ լայն զարդակարերով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Բաճկոնի երեսացուն դեղնականաչավուն, 'Գրետա' տեսակի գործվածքից կամ համարժեք, 50% բամբակ և 50% պոլիէսթեր բաղադրությամբ: Աստառը ԳՕՍՏ-20272-2014 8-C5-ԲՍ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գույնի գործվածքից: Բաճկոնի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Արտադրվում են 46/2 մինչև 64/6 չափս-հասակի: Փաթեթավորումը՝ - եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերի չափսերը՝ լայնությունը 56սմ, բարձրությունը 20սմ և երկարությունը՝ 100սմ: Արկղերը պիտակավորված՝ պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝2%: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Չափս-հասակային սանդղակ Կրծքավանդակի շրջագիծ / Հասակ: 46, 48, 50, 52, 54, 56, 58, 60, 62, 64, Ընդամենը % 2: 0.4, 2, 2, 1, 5.4 3: 1, 14, 15, 10, 4, 1, 0.5, 45.5 4: 0.6, 6, 8.5, 10, 5.5, 3, 2, 0.5, 0.5, 0.2, 36.8 5: 1, 1, 2, 2, 1.7, 1.3, 0.4, 0.4, 0.2, 10 6: 0.5, 0.5, 0.5, 0.3, 0.2, 0.1, 0.1, 0.1, 2.3 Ընդամենը %: 2, 23, 27, 23.5, 12, 6, 4, 1, 1, 0.5, 100
4	Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կապույտ գույնի կիսաբրդյա	Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կապույտ գույնի կիսաբրդյա	<Պահապան> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	**Բաճկոն՝ գարնանային-աշնանային կապույտ գույնի կիսաբրդյա (հատ)** Բաճկոնն ունի երկկարանի ներկարված թևքեր, ծալովի օձիք և դարձածալ, օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Հետևամասին և առաջամասին մշակված են վրակարված կոկետկաներ: Առաջամասում մշակված են շերտիկով կողքի գրպաններ: Հետնամասն ունի միջնակար: Բաճկոնի օձիքը կտրված կանգունակով է: Բաճկոնի առաջամասերի և հետևամասերի աստառները փախլավանձև մգդակարված են տաքացնող ներդիրով (սինտեպոն): Թևքերի աստառներին ներդրվում է սինտեպոն: Ձախ առաջամասի աստառին մշակված է շերտիկով ծոցագրպան, որը կոճկվում է օդային օղակով և կոճակով: Բաճկոնը կապվում է 4-4,5սմ լայնության գոտիով, որը անցկացվում է կողքերի կարերում մշակված կամրջակների միջով: Գոտին կոճկվում է պլաստմասե ճարմանդով և գոտու վրա մշակված կամրջակով: Բաճկոնը կոճկվում 4 կոճակօղակներով՝ գաղտնի կոճկվածքով: Լանջափեշի, օձիքի, գոտու, գրպանի, կոկետկաների եզրերը մշակված են 0,1-0,7 սմ լայնությամբ զուգահեռ զարդակարերով: Գաղտնի կոճկվածքը մշակվում է 6 սմ լայնությամբ լայն զարդակարերով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Բաճկոնի երեսացուն կապույտ գույնի, "Գրետա" տեսակի գործվածքից կամ համարժեք, 50% բամբակ

և 50% պոլիէսթեր բաղադրությամբ: Աստառը ԳՕՍՏ-20272-2014 8-C5-ВШ արտիկուլի կամ համարժեք կապույտ գույնի գործվածքից: Բաճկոնի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ:

Արտադրվում են 46/2 մինչև 64/6 չափս-հասակի: Փաթեթավորումը - եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերի չափսերը՝ լայնությունը 56սմ, բարձրությունը 20սմ և երկարությունը՝ 100սմ(շեղումները 2%): Արկղերը պիտակավորված՝ պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝2%: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

<u>Չափս-հասակային սանդղակ</u>

Կրծքավանդակի շրջագիծը / Հասակ	46	48	50	52	54	56	58	60	62	64	Ընդամենը %
2	0.4	2	2	1							5.4
3	1	14	15	10	4	1	0.5				45.5
4	0.6	6	8.5	10	5.5	3	2	0.5	0.5	0.2	36.8
5		1	1	2	2	1.7	1.3	0.4	0.4	0.2	10
6			0.5	0.5	0.5	0.3	0.2	0.1	0.1	0.1	2.3
Ընդամենը %	2	23	27	23.5	12	6	4	1	1	0.5	100

Բաճկոն՝գարնանա-աշնանային,կիսաբրդյա կանացի	Բաճկոն՝գարնանա-աշնանային,կիսաբրդյա կանացի	<Պահապան> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	<u>**Կոստյում՝ կիսաբրդյա, ամենօրյա սև գույնի (լրակազմ)**</u> ТУ 858-5300-2005: Կիսաբրդյա կոստյումը բաղկացած է կիտելից և ազատող տաբատից: Կիտելը բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը կոճկվում են չորս, ՀՀ ԶՈՒ զինանշանի պատկերով 22 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները (գրպանների կափույրներ, օձիք) նույնպես կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են մեկական, ՀՀ ԶՈՒ զինանշանի պատկերով 14 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով, իսկ կողքերից՝ կտրվածքով, կափույրներով գրպաններ: Մեջքի ներքևում, կենտրոնից բացվածքով: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակված է կախիչ՝ թևերը ներկարված: Աստառը՝ ԳՕՍՏ-20272-2014 8-C5-ВШ արտիկուլի կամ համարժեք սև գույնի գործվածքից: Ձախ լանջափեշին ներսամասից մշակվում է կտրվածքով ծոցագրպան: Ազատող տաբատը կազմված է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով: Աջ հետևամասում կտրված գրպան կափույրով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար, կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետևամասի միացման կարի վրա: Կողային կարերում անցկացվում է 1,5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կամ համարժեք կարմիր գույնի մահուդից երիզներ: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է ԳՕՍՏ-20272-2014 8-C5-ВШ արտիկուլի կամ համարժեք սև գույնի գործվածքից աստառ: Կոստյումը՝ 2311 արտիկուլի կամ համարժեք կիսաբրդյա սև գույնի գործվածքից, 317 գրամ, մակերեսային խտությամբ 67% բրդի և 33% պոլիէսթեր բաղադրությամբ: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 46/2 մինչև 64/6 չափս-հասակի: Կիտելի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը, ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Արկղերի չափսերը՝ լայնությունը 40սմ, բարձրությունը 20սմ և երկարությունը՝ 80սմ(շեղումները 2%): Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Շեղումները՝ ըստ տեխնիկական պայմանի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: **Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազը երկու ամիս առաջ:**

6	Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա սև գույնի	Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա սև գույնի	<Պահապան> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	<u>Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա սև գույնի (լրակազմ)</u> ТУ 858-5324 2005: Կիսաբրդյա բաճկոնը կազմված է լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը միացվում են կենտրոնական շղթայական, կոճկվող, լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց ներկարված գրպաններ. գրպանները ծածկող կափույրները կոճկվում են երկու ԶՈՒ զինանշանի պատկերով, ոսկեգույն 14 մմ կոճակներով: Կողային գրպանները շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով, կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Թևքերի մանժետների վերին եզրերով անցկացված են 1.5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կարմիր կամ համարժեք գույնի մահուդից երիզներ: Մեջքը կոկետկայով: Կոկետկայի ներքևի եզրով և կրծքամասի գրպանների կափույրների վերին եզրերով անցկացված են 1.5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կամ համարժեք կարմիր գույնի մահուդից երիզներ: Մեջքի կոկետկայից 1,5-2 սմ ներքև, կենտրոնում կարմիր գույնի թելով գործվում է <ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ> մակագրություն: Տառի բարձրությունը 28-30մմ, պատի հաստությունը՝ 5մմ: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակված է կախիչ, թևքերը ներկարված, ԶՈՒ զինանշանի պատկերով, ոսկեգույն 14 մմ երկուական կոճակով կոճկվող մանժետներով: Ուսադիրների շրջանում երեք փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Աստառը ԳՕՍՏ-20272-2014 8-C5-BШ արտիկուլի կամ համարժեք սև գույնի գործվածքից:Ազատող տաբատը բաղկացած է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը կողային գրպաններով: Աջ հետևամասում կտրված գրպան՝ կափույրով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար, կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի կարի վրա: Կողային կարերում անցկացվում է 1.5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կամ համարժեք կարմիր գույնի մահուդից երիզներ:Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է ԳՕՍՏ-20272-2014 8-C5-BШ արտիկուլի կամ համարժեք սև գույնի գործվածքից աստառ: Բաճկոնի կրծքամասի գրպաններից մեկի կոճակից պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը, Ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Բաճկոն /կուրտկա/ և տաբատի երեսացու՝ 2311 արտիկուլի կամ համարժեք կիսաբրդյա սև գույնի գործվածքից, 317 գրամ մակերեսային խտությամբ 67% բրդի և 33% պոլիէսթեր բաղադրությամբ: Աստառը ԳՕՍՏ-20272-2014 8-C5-BШ արտիկուլի կամ համարժեք սև գույնի գործվածքից: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 46/2 մինչև 64/6 չափս-հասակի: Փաթեթավորումը՝ - եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Արկղերի չափսերը՝ լայնությունը 40սմ, բարձրությունը 20սմ և երկարությունը՝ 80սմ (շեղումները 2%): Արկղերը պիտակավորված՝ պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Շեղումները՝ ըստ տեխնիկական պայմանի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: **Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազը երկու ամիս առաջ:**
7	Կոստյում՝ ավտոտեսուչների համար	Կոստյում՝ ավտոտեսուչնե րի համար	<Պահապան> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	<u>**Կոստյում՝ ավտոտեսուչների համար (լրակազմ)**</u> Կոստյումի բաճկոնը բաղկացած է լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը գաղտնի եզրաշերտով, կոճկվում է կենտրոնական շղթայական կոկետկայով: Գաղտնի եզրաշերտը կոճկվում է վերևից և ներքևից մեկական կոճակ օղակով: Կոկետկայի ներքևի եզրով և կրծքամասի գրպանների կափույրների վերին եզրերով անցկացված են 1,5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կամ համարժեք կարմիր գույնի մահուդից երիզներ, որոնց վերևում մշակված են հորիզոնական՝ 2 սմ լայնության լույսն անդրադարձնող ժապավեններ: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց ներկարված գրպաններ: Գրպանների ծնավոր կափույրները կոճկվում են մեկական ԶՈՒ զինանշանի պատկերով, ոսկեգույն 14 մմ ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Կողային գրպանները շեղակի կտրվածքով՝ շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով, կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Թևքերի մանժետների (բազկակալ) վերին եզրերով անցկացված են 1.5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կամ համարժեք կարմիր գույնի մահուդից երիզներ: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակված է կախիչ, թևքերը ներկարված, ԶՈՒ զինանշանի պատկերով, ոսկեգույն 14 մմ երկուական կոճակով կոճկվող մանժետներով: Մեջքի կոկետկայից 1,5-2 սմ ներքև, կենտրոնում կարմիր գույնի թելով գործվում է <ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԱՎՏՈՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ> մակագրություն: Տառի բարձրությունը 28-30մմ, պատի հաստությունը՝ 5մմ: Ուսադիրների շրջանում երեք փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Ազատող տաբատը բաղկացած է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը կողային գրպաններով: Աջ հետևամասում կտրված գրպան կափույրով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Անդրավարտիքի ծնկներից ներքև մշակվում են 2 սմ լայնության, երկուական հորիզոնական լույսն անդրադարձնող երիզներ: Կողային կարերում

				անցկացնում է՝ 5:2 մմ լայնության 2481/2581 հա արտիկների նարմիր գույնի մահուզից երիզներ: Առաջամասում, մինչև ծնոները մշակվում է ԳՕՍՏ-20272-2014 8-C5-ՅԱ արտիկների համար համարժեք սև գույնի կտորից առաջառոլ: Ավտոտեսուչների կոստյումը՝ 2311 արտիկների համար համարժեք կիսաբրդյա սև գույնի գործվացքից, 317 գրամ մանրեսային խտությամբ 67% բրդի և 33% պոլիէսթեր բաղադրությամբ: Ստանդարտը ԳՕՍՏ-20272-2014 8-C5-ՅԱ արտիկների համար համարժեք սև գույնի գործվածքից: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 46/2 մինչև 62/6 չափս-հասակի: Տաբատի գոտու ամրջակից պետք է կախված լինի ատամ, պիտակի մրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Բաճկոնի ներսի կողմից կարվում է արտառոնքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ - եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Արկղերի չափերը՝ լայնությունը 40սմ, բարձրությունը 20սմ և երկարությունը՝ 80սմ: Արկղերը պիտակավորված՝ պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափերը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Պատվիրատուի պահանջով, յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: **Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազը երկու ամիս առաջ:** Տեխնիկական պայմանները համաձայնեցվում են պատվիրատուի հետ:

Ծանոթություն՝
Մատակարարվող բոլոր ապրանքատեսակները պետք է լինեն նոր, չօգտագործված վիճակում և պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արցախի 61) մատակարար կազմակերպության տրանսպորտով:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքի անվանումը	Չափի միավորը	Ընդհանուր քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Ընդհանուր գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետ
1	Կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա	լ-կ	2500	20 880	52 200 000	Ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում
2	Բաճկոն և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա	լ-կ	500	17 508	8 754 000	
3	Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կիսաբրդյա	հատ	13000	13 140	170 820 000	
4	Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կապույտ գույնի կիսաբրդյա	հատ	1100	11 760	12 936 000	
5	Բաճկոն՝գարնանա-աշնանային,կիսաբրդյա կանացի	հատ	1800	11 760	21 168 000	
6	Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա սև գույնի	լ-կ	1300	26 400	34 320 000	
7	Կոստյում՝ ավտոտեսուչների համար	լ-կ	171	31 200	5 335 200	

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ՝ գնդ-կ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Պահապան» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Քուչակի 16/2շ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500198133700
ՀՎՀՀ 00882372

տնօրեն

Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
N ԲՄԱՊՁԲ-7/17-2 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքի անվանումը	Չափի միավորը	Ընդհանուր քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Ընդհանուր գինը, ՀՀ դրամ	
1	Կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա	լ-կ	2500	20 880	52 200 000	Պայմանագրի կատարման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացույցով
2	Բաճկոն և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա	լ-կ	500	17 508	8 754 000	
3	Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կիսաբրդյա	հատ	13000	13 140	170 820 000	
4	Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կապույտ գույնի կիսաբրդյա	հատ	1100	11 760	12 936 000	
5	Բաճկոն՝գարնանա-աշնանային,կիսաբրդյա կանացի	հատ	1800	11 760	21 168 000	
6	Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա սև գույնի	լ-կ	1300	26 400	34 320 000	
7	Կոստյում՝ ավտոտեսուչների համար	լ-կ	171	31 200	5 335 200	

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Պահապան» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Քուչակի 16/2$_2$
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500198133700
ՀՎՀՀ 00882372

տնօրեն

Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
N ԲՄԱՊՁԲ-7/17-2 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԲՄԱՊՁԲ-7/17-2 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԲՄԱՊՁԲ-7/17-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 27 . 04. 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Պահապան» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ.Մելիք-Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 19.03.2018թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-7/17-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **111 129 600 (հարյուր տասնմեկ միլիոն հարյուր քսանինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 2 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ք. Երևան, Բագրևանդի 5	«Պահապան» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Ավան, Քուչակի 16/2$_2$
աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 11500198133700
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00882372
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի պետ՝ ՊԺԿ	տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1

№ ԲՄԱՊՁԲ-7/17-2 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ ամիսներ 2018թ.						
						մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր
1	Կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա	լ-կ	700	20 880	14 616 000	350	350					
2	Բաճկոն և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա	լ-կ	400	17 508	7 003 200	300	100					
3	Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կիսաբրդյա	հատ	5000	13 140	65 700 000			1000	1000	1000	1000	1000
4	Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կապույտ գույնի կիսաբրդյա	հատ	800	11 760	9 408 000				400	400		
5	Բաճկոն՝գարնանա-աշնանային,կիսաբրդյա կանացի	հատ	400	11 760	4 704 000				400			
6	Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա սև գույնի	լ-կ	300	26 400	7 920 000		300					
7	Կոստյում՝ ավտոտեսուչների համար	լ-կ	57	31 200	1 778 400		57					
	Ընդամենը	111 129 600 (հարյուր տասնմեկ միլիոն հարյուր քսանինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ										

Ծանոթություն՝ Մատակարարվող բոլոր ապրանքատեսակները պետք է լինեն նոր, չօգտագործված վիճակում և պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արցախի 61) մատակարար կազմակերպության տրանսպորտով:

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏՎ դեպարտամենտի պետ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Պահապան» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Քուչակի 16/22
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500198133700
ՀՎՀՀ 00882372

տնօրեն

[illegible]ԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2

№ ԲՄԱՊՁԲ-7/17-2 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ							
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա	18221600/316/9/20	14616000	14616000	14616000	14616000	14616000	14616000	14616000	14616000
2	Բաճկոն և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա	18221600/314/9/20	7003200	7003200	7003200	7003200	7003200	7003200	7003200	7003200
3	Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կիսաբրդյա	18231900/308/9/2	-	-	13140000	26280000	39420000	52560000	65700000	65700000
4	Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կապույտ գույնի կիսաբրդյա	18231900/306/9/2	-	-	-	4704000	9408000	9408000	9408000	9408000
5	Բաճկոն՝գարնանա-աշնանային,կիսաբրդյա կանացի	18231900/307/9/2	-	-	-	4704000	4704000	4704000	4704000	4704000
6	Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա սև գույնի	18221600/321/9/20	-	-	7920000	7920000	7920000	7920000	7920000	7920000
7	Կոստյում՝ ավտոտեսուչների համար	18221600/319/9/20	-	-	1778400	1778400	1778400	1778400	1778400	1778400

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Պահապան» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Քուչակի 16/2$_2$
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500198133700
ՀՎՀՀ 00882372

տնօրեն

Ա. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ